

ՄԱԹԻԿ ՄԵԼԻՔԻՍԱՆԵԱՆ

(ՎԷՊ)

ՆԱԽԱԲԱՆ

Ներկայ վեպը (ինչպես այն միւսները, որոնք լոյս տեսան «Հայրենիք» հանդեսին մէջ «Հաճի Մուրատ», «Հաճի Ապտուլլահ» գլխատուած տիտղոսներով, քանի որ շարքին ընդհանուր վերնագիրը, «Հարիւրմէկ տարուան» կը գրտնենք միայն «Յուսաբեր»-ի մէջ հրատարակուած երրորդ միութեան վրայ՝ «Միւլէյման էֆէնտի» հանուած է, ըսել կ'ուզեմ անջատուած «Մնացորդաց»-ի երկրորդ հատորէն՝ «Արիւնի ճամբով»:

«Մնացորդաց»-ի ստեղծագործութեան մէջ վիպային իրադարձութեան հետգիտել ընդարձակուիլը, ծանրաբեռնուիլը, յորդումի գլխաւոր պատմառը կազմեցին սա առանձնացման: Ճակատագրին մէկ խաղովը, նկուղի մը մէջ գառագեղուած այդ մարդերը շատ բարդ իրողութեանց հանգոյցներ էին: Կեանքը այդ մարդոց վրայ առանձին, քէն հանգունատիպ ողբերգութիւն մըն էր: Բայց «Մնա-